ՄԱՐԿ ՌԻԺԿՈՎ
(Ռուսաստան)

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻՆ

Ապրում եմ ես հեռվում, Ուրալ լեռնաստանում,
Խոհուն Եվրոպայի և Ասիայի ափին
Եվ իմ հեռու-հեռվից Արարատն եմ տեսնում,
Ու տեսնում եմ նրան՝ Սուրբ Մեսրոպին:

Հաճախ անկարող են տարածություն ու դար,
Երբ որ սիրտն է ձգտում հասնել ուրիշ սրտի...
Ոչ-հայկական մի ձեռք՝ հայերենով անվարժ
«Մեսրոպ» գծագրում է ճերմակ թղթին...

Նա ճառագեց, երբ դեռ չկար լույսի երիկ,
Նա առաքեց երկրին արև, գիր ու ոգի.
Անցան դարեր, և արդ, ինձ էլ, հեռավորիս,
Լույս է տալիս ջահը Սուրբ Մաշտոցի:

Ժամանակի հողմը փշրեց նավը հայոց,
Պատռեց առագաստը փոթորկակոծ ճամփին,
Կտրատվել է հողը սահմանների սրով,
Սահման չկա, սակայն, Սուրբ Մեսրոպին:

Տողը ամրոց է մի, որ չեն կարող առնել,
Տողը՝ մոխրից անգամ կելնի, կտրոփի.
Մոխիրների միջից հապար անգամ հառնել
Եվ ապրում է գիրը Սուրբ Մեսրոպի:

Նա գրերը ցանեց ճիշտ սերմերի նման,
Բարձրացել է բերքը ու դեռ ծփա պիտի,
Ոչ-հայկական մի սիրտ՝ ռուս հասարակ
մի մարդ
Օրհներգում է լույսը Սուրբ Մեսրոպի...

Թարգմանությունը՝ Ս. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ